

ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Ստեփանավան քաղաքի (Հայաստանի Հանրապետություն) և
Դեսին Շաղալիո քաղաքի (Ֆրանսիայի Հանրապետություն) միջև

2014-2017թ.թ.

Մի կողմից՝ Հայաստանի Հանրապետության Ստեփանավան քաղաքը՝ ի դեմս քաղաքապետ պարոն Միքայել Ղարաքեշիշյանի, մյուս կողմից՝ Ֆրանսիայի Հանրապետության Դեսին Շաղալիո քաղաքը՝ ի դեմս տիկին Լորանս Ֆոտրայի, կնքում են ապակենտրոնացված համագործակցության համաձայնագիր:

Նախաբան

- Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության համագործակցության շուրջ ձեռք բերած համաձայնությունները,
- Հաշվի առնելով 1991թ.-ի նոյեմբերի 16-ին Ստեփանավանում ստորագրված համաձայնության արձանագրությունը, 1992 թ.-ի ապրիլի 11-ին Դեսին Շաղալիոյում ստորագրված բարեկամության համաձայնությունը և երկու համայնքների միջև գոյություն ունեցող համերաշխության և բարեկամության կապերը,
- Գիտակցելով ապակենտրոնացված համագործակցության աճող կարևորությունն ու դրա դերը տեղական զարգացման մեջ,
- Ցանկանալով հզորացնել և զարգացնել գոյություն ունեցող գործակցությունը՝

Որոշում և հայտարարում են.

ՀՈԴՎԱԾ 1- ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Սույն համաձայնագիրը նպատակ ունի ապակենտրոնացված համագործակցության գործընթացների զարգացման համար ստեղծելու նպաստավոր միջավայր՝ հաստատելով կայուն հարաբերություններ տեղական համայնքների և նրանց գործընկերների միջև՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի հմտություններն ու պարտավորությունները:

ՀՈԴՎԱԾ 2 – ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Համագործակցության առանցքները համախմբում են հետևյալ ոլորտները.

- Պատասխանատու զբոսաշրջություն
- Ֆրանսերենի ուսուցում և ֆրանսախոսության խթանում
- Ինստիտուցիոնալ մարմինների և կազմակերպությունների փոխանակումներ
- Տնտեսական զարգացում
- Սոցիալական և առողջապահական ծրագրեր
- Միջմշակութային երկխոսություն

ՀՈՂՎԱԾ 3 – ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

Երկու քաղաքները պարտավորվում են նշանակել մեկական ներկայացուցիչ՝ համագործակցությանը հետևելու համար: Նորանշանակները մշտական կապի մեջ կլինեն և տեղական իշխանությունների հետ համատեղ կմշակեն եկող տարվա գործողությունների պլան: Նրանք պարտավորված կլինեն նաև իրականացնելու գործողությունների իրականացման վերաբերյալ տարեկան հաշվետվություն:

ՀՈՂՎԱԾ 4 – ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Փոխայցելությունների կտրվածքով տրանսպորտային և կեցության ծախսերի համար կգործի բաշխելիության սկզբունք. միջազգային տրանսպորտափոխադրումները կվճարի այցելող քաղաքը, իսկ տեղում կեցության ծախսերն ու տեղաշարժերը՝ հյուրընկալող քաղաքը:

Գործողությունների պլանի կտրվածքով յուրաքանչյուր քաղաքի ֆինանսական մասնակցությունը կքննարկվի համատեղ և կնախաձեռնվեն միջոցներ՝ ֆինանսական աղբյուրներ փնտրելու համար:

ՀՈՂՎԱԾ 5 – ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ

Ապակենտրոնացված համագործակցության սույն համաձայնագիրը կնքվում է երեք տարի ժամկետով՝ ստորագրման պահից սկսած: Այն հնարավոր է երկարացնել ևս երկու տարի ժամկետով, երկու կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

ՀՈՂՎԱԾ 6 – ԽՁՈՒՄ

Կողմերից յուրաքանչյուրը կարող է ցանկացած պահի խզել սույն համաձայնագիրը՝ գործընկերոջը դադարեցման մասին երեք ամիս շուտ տեղյակ պահելով:

Երկու քաղաքապետերը գտնվում են իրենց կատարողական մանդատների ժամկետներում:

Կնքված է երկու օրինակից՝ հայերեն և ֆրանսերեն, 11 հոկտեմբեր 2014թ., Ստեփանավան

Ստեփանավանի քաղաքապետարան

Դեսին Շաղպիոյի քաղաքապետարան

Համայնքապետ

Համայնքապետ

Պարոն Միքայել Ղարաքելչիշյան

Տիկին Լորանս Ֆոտրա